

«Ճիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

Հանրապետական հանրակրթական բաց օլիմպիադա հայոց լեզվից

2025-2026 ուստարի

7-րդ դասարան

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

Եղիշե Չարենց

Սիրելի՛ բարեկամ, կարդա այս գրվածքը, որի հեղինակը ժամանակակից գրող Սերգեյ Վարդանյանն է:

Կատարի՛ր առաջադրանքները:

1.Տեխստում «փաղափեական» վերջածանց ունեցող մի բանի բառեր կան, գտի՛ր, դո՛ւրս գրի՛ր դրանք: Ի՞նչ կավելացնես, որ տրված բառերը ևս դառնան գտածդ բառերի նման (10 միավոր):

Փռքիկ, սևուկ, մանրիկ, հնճուկ, գլխիկ:

աթոռ---աթոռակ

թոչուն---թոչնակ, թոչնիկ

ծագ---ծագուկ, ծագիկ

հորթ----հորթուկ, հորթիկ

գառ----գառուկ, գառնիկ

Առակերտը պիտի սրանցից մեկնումեկը գրի: Երկուսն էլ պահանջելու հարկ չկա:

2.Տեխստի ո՞ր բառերում է թափնվել աչք-ը, գտի՛ր, դո՛ւրս գրի՛ր, վերլուծի՛ր բառակազմորեն (5 միավոր):

Աչք- գեղաչյա = գեղ+աչ+յա, արեգակ = արեգ+ակ, սևակն= սև+ակն

«Ճիրակացու ճեմարան»

միջազգային գիտակրթական համալիր

5. Անուուստ գիտես՝ ինչ են բնածայնական բառերը; Տեխստուն գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր բնության ձայները վերարտադրող արմատներով բառերը, վերականգնի՛ր արմատները (5 միավոր):

Ճննդուկ-ճուղ

Բաբախել-բախ

6. Տեխստուն գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր արմատ+արմատ կամ արմատ+ա+արմատ կառույց ունեցող բառերը, վերլուծի՛ր բառակազմներն (5 միավոր):

Արևածաղիկ = արև+ա+ծաղիկ

Նույնիսկ = նույն+իսկ

Ջիրապատուղ = ձիթ-ձեթ +ա+ պտուղ /ե-ի/

Գլխավերև = գլխ-գլուխ+ա+վերև /ու-ն սովել է/

Արեգակ = արեգ+ակ

Հրավարս = հր-հուր+ա+վարս /ու-ը/

Սևակն = սև+ակն

7. Քո կարծիքով ի՞նչ էր մտածում փոքրիկ սերմը: Շարադրի՛ր նրա մտքերը կամ երազանքը քո բառերով տասը նախադասության սահմանում (10 միավոր):



**«Ճիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր**

Շարադրանքի գնահատման սանդղակ

Միավոր	Նկարագրություն
10	<ol style="list-style-type: none"> Գերազանցորեն դրսևորել է երևակայություն և ստեղծարարություն. հորինել է սերմի մտորումները և երազանքը՝ հիմնվելով տրված գրվածքի բովանդակության վրա: Գրագետ և հստակ շարադրում է մտերը. նախադասությունները տրամաբանորեն կապված են: Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն: Ուղղագրական, կետադրական, բերականական, բառագործածության սխալներ չկան:
9-8	<ol style="list-style-type: none"> Կալ դրսևորել է երևակայություն և ստեղծարարություն. հորինել է սերմի մտորումները և երազանքը՝ հիմնվելով տրված գրվածքի բովանդակության վրա: Գրագետ և հստակ շարադրում է մտերը. նախադասությունները տրամաբանորեն կապված են: Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն: Ուղղագրական, կետադրական, բերականական, բառագործածության 2-3 սխալներ կան:
7-6	<ol style="list-style-type: none"> Մասամբ դրսևորել է երևակայություն և ստեղծարարություն. սերմի մտորումներն է շարադրել՝ հիմնվելով տրված գրվածքի բովանդակության վրա: Մասամբ է գրագետ շարադրում մտերը. նախադասությունները տեղ-տեղ տրամաբանորեն կապված չեն: Բառապաշարը առանձնապես հարուստ չէ. կիրառում է 1-2 պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն: Ուղղագրական, կետադրական, բերականական, բառագործածության 4-5 սխալներ կան:
5-4	<ol style="list-style-type: none"> Երևակայություն և ստեղծարարություն առանձնապես չի դրսևորել. սերմի մտորումները շարադրել է՝ առանց հիմնվելու տրված գրվածքի բովանդակության վրա: Մասամբ է գրագետ շարադրում մտերը. նախադասությունները տեղ-տեղ տրամաբանորեն կապված չեն: Բառապաշարն աղետտիկ է. չի կիրառում պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն: Ուղղագրական, կետադրական, բերականական, բառագործածության 6-8 սխալներ կան:
3-2	<ol style="list-style-type: none"> Երևակայություն և ստեղծարարություն չի դրսևորել. սերմի մտորումները շարադրել է՝ առանց հիմնվելու տրված գրվածքի բովանդակության վրա: Ոչ գրագետ է շարադրում մտերը. նախադասությունները տեղ-տեղ տրամաբանորեն կապված չեն: Բառապաշարն աղետտիկ է. չի կիրառում պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն: Ուղղագրական, կետադրական, բերականական, բառագործածության 9-10 սխալներ կան:
1	Շարադրանքը սերմի մտորումները չեն:
0	7-րդ առաջադրանքը չի կատարել:

